

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ պատասխանատու անձինք, հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Պատասխանատվության շրջանակ
Գենիկ Կարապետյան	Տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն	Որպես տնօրենների խորհրդի նախագահ՝ տնօրենների խորհրդի աշխատանքների կազմակերպման համար, որպես գլխավոր տնօրեն՝ ընթացիկ գործունեության (այդ թվում՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառման կազմակերպման) համար
Դավիթ Կարապետյան	Փոխտնօրեն, տնօրենների խորհրդի անդամ	արտադրության գծով
Զիվան Գյուլումյան	Գլխավոր ինժիներ, տնօրենների խորհրդի անդամ	արտադրության գծով
Եղիշե Ստեփանյան	Գլխավոր ինժինների տեղակալ, տնօրենների խորհրդի անդամ	արտադրության գծով
Սիլվա Խաչատրյան	Տնօրենների խորհրդի անդամ, գլխավոր հաշվապահ	Հաշվապահական հաշվառում վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար
Կարեն Սահակյան	Տնօրենների խորհրդի անդամ	արտադրության գծով

**«ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ
2012Թ. ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ)**

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՁԵԿՈՒՅՑ

1) Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած կարևոր դեպքերի նկարագիրը և դրանց ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որի հետ առնչվելու է թողարկողը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում: Կարևոր դեպքերը բոլոր այն դեպքերն են, որոնք էական ազդեցություն են ունեցել թողարկողի ֆինանսական վիճակի վրա, ինչպես նաև այլ դեպքերը, որոնք թողարկողի կարծիքով կարևոր են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

Ընկերության գործունեության հիմնական տեսակը ֆերոմոլիբդենի, մաքուր մոլիբդենի ջարդոնի և կալիումի պերտենատի արտադրությունն է: Արտադրության հումքն Ընկերությունը ձեռք է բերում ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան ընկերություններից՝ համաձայն այդ ընկերությունների հետ կնքված համապատասխան պայմանագրերի: Այդ ընկերություններից են.

1. «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոնքինատ» ՓԲԸ (Հայաստան) - Հումքի գնում
2. «Վ. Մինասյան Տրեյդինգ կո» (Իրան) - Ֆերոսիլիցիումի գնում
3. "Волгоградская алюминиевая компания порошковая металлургия"# «ՎԱԼԿՈՍ-ՊՍ» ՍՊԸ (Ռուսաստան) - Ալյումինի փոշու գնում
4. ООО#Русекспорт"#Վրաստան) - Երկաթե հրաթեփի գնում
5. "ENERGY INVEST" (Վրաստան) - Հեղուկ ամոնյակի գնում
6. «Ռուսթալի ազոտ» (Վրաստան) - Հեղուկ ամոնյակի գնում

Պատրաստի արտադրանքը վաճառվում է հետևյալ ընկերություններին.

1. Cronimet Metal Trading AG (Գերմանիա) – Ֆերոմոլիբդենի վաճառք
2. Cronimet Ferroleg LLC (Գերմանիա) – Մոլիբդենի բրիկետի վաճառք
3. Midas Metals International LLC (Դուբայ) - Ֆերոմոլիբդենի վաճառք

Հումքի ձեռքբերման գները սահմանվում են ինչպես նախնական պայմանավորվածության համաձայն, այնպես էլ տարբեր միջազգային բորսաներում ձևավորված ու ամսագրերում հրապարակված մետաղների գներով:

2012 թ. 3-րդ եռամսյակի ընթացքում ընկերության արտադրության ծավալը կազմել է 7,695,291,000 դրամ կամ 18,731,100 ԱՄՆ դոլար: Նույն ժամանակահատվածում իրացումը կազմել է 7,280,526,000 դրամ կամ 17,721,500 ԱՄՆ դոլար: Արտադրության ծավալի և իրացման ամփոփ տվյալները բերված են թիվ 1 և թիվ 2 աղյուսակներում:

Աղյուսակ 1

«Մաքուր Երկաթի Գործարան» ԲԲԸ արտադրության ծավալը 2012թ. 3-րդ եռամսյակ

Արտադրվել է	Քանակ		Հազ. դրամ	Հազ. դոլար
Ֆերոմոլիբդեն	տն	812.0	5,874,836.5	14,299.9
Մաքուր մոլիբդենի ջարդոն	տն	166.0	1,820,454.5	4,431.2
Կալիումի պերտենատ	կգ	0.0	0.0	0.0
Ընդամենը			7,695,291.0	18,731.1

«Մաքուր Երկաթի Գործարան» ԲԲԸ իրացման ծավալը 2012թ. 3-րդ եռամսյակ

Իրացվել է	Քանակ		Հազ. դրամ	Հազ. դոլար
	տն			
Ֆերոմոլիբդեն	տն	820.0	5,945,332.0	14,471.5
Ֆերոմոլիբդենի գների վերահաշվարկ*	-	-	-496,210.7	-1,207.8
Մաքուր մոլիբդենի ջարդոն	տն	177.0	1,947,072.4	4,739.4
Մաքուր մոլիբդենի ջարդոնի գների վերահաշվարկ*	-	-	-181,650.3	-442.2
Կալիումի պերոքսիդ	կգ	0.0	0.0	0.0
Հյուրանոցային ծառայություն	-	-	65,982.6	160.6
Ընդամենը			7,280,526.0	17,721.5

* Հաշվետու եռամսյակում արտադրանքի վաճառքից հետո ընկած ժամանակահատվածում արտադրանքի գները միջինում նվազել են, այդ պատճառով դրանց դիմաց վճարվել է ավելի ցածր գին:

Ընկերության գործունեության հետ կապված հիմնական ռիսկը պայմանավորված է համաշխարհային շուկայում տեղի ունեցող իրադարձություններով: Դրանցից ամենաէականը Ընկերության արտադրանքի և դրա համար անհրաժեշտ հումքի միջազգային գների փոփոխությունն է, ինչն ուղղակիորեն ազդում է Ընկերության շահույթի վրա: Հաշվետու եռամսյակում և՛ հումքի, և՛ արտադրանքի գները նվազել են:

Մյուս ռիսկը արժույթային ռիսկն է: Արտարժույթների փոխարժեքները հաշվետու եռամսյակում համեմատաբար կայուն են եղել, այդ պատճառով դրանց տատանումները Ընկերության հիմնական ֆինանսական ցուցանիշների վրա քիչ են ազդել:

Նշված երկու գործոններն էլ իրենց անորոշությամբ էապես կազդեն նաև հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի վրա:

Ընկերությունը 2011թ. նոյեմբերի 1-ին Բելգիական Cockerill Maintenance & Ingenierie SA կորպորացիայի հետ կնքել էր պայմանագիր՝ մոլիբդենի թրծման վառարան գնելու համար: 2012թ.-ին ստացվել են այդ վառարանի հիմնական մասերը և մինչև նոյեմբերի կես նախատեսվում է, որ ամբողջ վառարանը կստացվի: Այժմ զուգահեռ կատարվում են նաև վառարանի հավաքման աշխատանքներ: Այդ վառարանի շահագործման դեպքում ընկերության արտադրանքը և՛ քանակով, և՛ որակով կբարելավվի, ինչի պահանջարկն այսօր առկա է: Նշվածն Ընկերության կարծիքով դրականորեն կանդրադառնա ընկերության ֆինանսական ցուցանիշների վրա:

Ընկերությունը հաշվետու եռամսյակում «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ հետ կնքել է վարկային պայմանագիր և վարկային (1,500,000,000 դրամ) ու սեփական (345,000,000 դրամ) միջոցները (ընդհանուր՝ 1,845,000,000 դրամ) ուղղել «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ կանոնադրական կապիտալի ավելացմանը՝ լրացուցիչ թողարկվող բաժնետոմսերի ձեռքբերման միջոցով: Կանոնադրական կապիտալի ավելացմամբ առաջացած միջոցներով (ընդհանուր՝ 12,300,000,000 դրամ, Ընկերության մասնակցությունը «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ կանոնադրական կապիտալում 15 տոկոս է) «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն ձեռք է բերվել «Լեռ-Էքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 100 տոկոս բաժնետոմսերը: «Լեռ-

Էքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը լեռնագործային ընկերություն է և գործունեություն է ծավալում Սյունիքի մարզի Գեղիի ենթաշրջանում:

Ընկերության ամփոփ ֆինանսական ցուցանիշները և գործակիցները բերված են թիվ 3 և թիվ 4 աղյուսակներում:

Աղյուսակ 3

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2012թ. III եռ.

Ցուցանիշ	Հազ. դրամ
Իրացված արտադրանքի ինքնարժեք	-6,587,343
Իրացման ծախսեր	-3,797
Վարչական ծախսեր	-150,020.0
Գործառնական գործունեությունից շահույթ	539,366.0
Այլ գործառնություններից շահույթ (վնաս)	-1,945.0
Այլ ոչ գործառնական շահույթ, որից`	825,254.0
<i>Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ</i>	<i>-439,431.0</i>
<i>Ֆինանսական ներդրումներից ավանդի %-ին եկամուտ</i>	<i>374,208.5</i>
<i>Շահութաբաժին ՉՊՄԿ-ից</i>	<i>899,999.7</i>
<i>Ակտիվների վերաբերող շնորհներից</i>	<i>9,015.0</i>
<i>Այլ շահույթ (վնաս)</i>	<i>-18,538.5</i>
2012թ. 3-րդ եռամսյակի շահույթ	1,362,675.0
Շահութահարկի գծով ծախս (նվազագույն շահութահարկ)	-130,582.0
2012թ. 3-րդ եռամսյակի զուտ շահույթ	1,232,093.0
Դեբիտորական պարտք	2,754,580.0
Կրեդիտորական պարտք	588,060.0

Աղյուսակ 4

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ 01.01.2012-30.09.2012թթ.

Ցուցանիշի անվանումը	01.10.2012 թ.
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	61358.3
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	10.5 %
Ակտիվների շահութաբերություն (ROA)	10.4 %
Զուտ շահույթի մարժա (NPM)	18.9 %
Կապիտալի համարժեքության գործակից	98.1 %
Ֆինանսական կախվածության գործակից	1.9 %
Բացարձակ իրացվելության գործակից	29.2
Ընթացիկ իրացվելության գործակից	33.9
Ընդհանուր իրացվելության գործակից	36.5
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	1746.3
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	0.2
Պաշարների շրջանառելիության գործակից	10.7
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	34.1
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	29.5
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	12.4

Ընկերության աշխատավարձի ֆոնդը՝ 296,922.5 հազ. դրամ է, աշխատողների միջին ցուց. թիվը՝ 561 մարդ, իսկ միջին աշխատավարձը՝ 176,424 դրամ:

2) Թողարկողի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:

Չարգացման նոր ծրագրերի և հեռանկարների վերաբերյալ կանխատեսումները կապված են մոլիբդենի թրծման նոր վառարանի հետ, որի շահագործումը հավանաբար կսկսվի 2012 թվականի վերջերին: